ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱՆԴՐԱՆԻԿ» ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հուլիսի 24-ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախաձեռնությամբ Լոռու մարզում մեկնարկեց «Անդրանիկ» սկաուտական բանակումը: Բանակումին մասնակցում են Հայաստանի, Իրանի, Իրաքի, Սիրիայի և Լիբանանի շուրջ 165 երիտասարդներ:

Բանակումի բացման արարողության ընթացքում հայ սկաուտներին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: Միջոցառման կազմակերպիչներին գնահատանքի խոսք ուղղեց նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ